## *1.2 Արտադրություն (ծառայություններ)*

### *1.2.1. Արդյունաբերություն*

***Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:*** 2005թ. հունվար-հունիսին հանրապետությունում, ըստ 2153 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 306720.4 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 305419.9 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում` 30435.9 մլն. դրամի, այլ երկրներում` 82418.0 մլն. դրամի արտադրանք:

2004թ. հունվար-հունիսի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 105.3%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման` 104.5%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2003թ. դեկտեմբերի նկատմամբ




Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

*(%)*

| | Նախորդ ամսվա նկատմամբ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ |
|---|---|---|---|
| **2004թ.** | | | |
| հունվար | 85.5 | 91.1 | 85.5 |
| փետրվար | 95.5 | 98.1 | 81.7 |
| մարտ | 118.6 | 111.3 | 96.9 |
| ապրիլ | 106.5 | 119.3 | 103.2 |
| մայիս | 86.9 | 91.2 | 89.7 |
| հունիս | 111.7 | 106.0 | 100.2 |
| հուլիս | 95.0 | 98.4 | 95.2 |
| օգոստոս | 98.8 | 98.6 | 94.1 |
| սեպտեմբեր | 106.3 | 92.4 | 100.0 |
| հոկտեմբեր | 103.5 | 97.9 | 103.5 |
| նոյեմբեր | 94.2 | 100.9 | 97.5 |
| դեկտեմբեր | 103.0 | 106.9 | 100.4 |

| | Նախորդ ամսվա նկատմամբ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ |
|---|---|---|---|
| 2005թ. | | | |
| հունվար | 81.7 | 100.7 | 81.7 |
| փետրվար | 113.2 | 110.1 | 92.5 |
| մարտ | 111.6 | 103.7 | 103.2 |
| ապրիլ | 96.7 | 96.3 | 99.8 |
| մայիս | 103.2 | 110.9 | 103.0 |
| հունիս | 106.2 | 106.4 | 109.4 |

## Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2005թ. հունվար-հունիսին[1]

| | Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով[2], մլն. դրամ | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով[2], մլն. դրամ | 2005թ. արտադրանքի (աշխատանք-ների, ծառայությունների) ֆիզի-կական ծավալի ինդեքսը 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (համադրելի գներով), % |
|---|---|---|---|
| **Ամբողջ արդյունաբերությունը** | **306720.4** | **305419.9** | **105.3** |
| *այդ թվում`* | | | |
| ***էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում*** | ***53527.4*** | ***53527.4*** | ***110.2*** |
| *դրանից`* | | | |
| էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում | 49360.0 | 49360.0 | 110.6 |
| *որից`* | | | |
| էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում | 41756.3 | 41756.3 | 105.3 |
| գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում | 7603.7 | 7603.7 | 153.8 |
| ջրի հավաքում, մաքրում և բաշխում | 4167.4 | 4167.4 | 105.7 |
| ***հանքագործական արդյունաբերություն*** | ***57745.5*** | ***53632.5*** | ***98.1*** |
| *որից`* | | | |
| մետաղե հանքաքարերի արդյունահանում | 56596.4 | 52525.3 | 97.9 |
| հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր | 1149.1 | 1107.2 | 110.3 |
| ***մշակող արդյունաբերություն*** | ***195447.5*** | ***198260.0*** | ***106.1*** |
| *որից`* | | | |
| սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն | 83245.4 | 87117.9 | 99.0 |
| ծխախոտային արտադրատեսակների արտադրություն | 7659.3 | 7817.7 | 129.1 |
| մանածագործական արտադրություն | 1128.1 | 1193.0 | 83.4 |
| հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում | 845.9 | 715.4 | 63.0 |
| կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն | 147.7 | 155.1 | 96.3 |
| բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն | 607.9 | 596.1 | 102.8 |

*[1] Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):*
*[2] Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*

| | Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով[1], *մլն. դրամ* | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով[1], *մլն. դրամ* | 2005թ. հունվար-հունիսին, արտադրանքի (աշխատանքնե-րի, ծառայությունների) ֆիզի-կական ծավալի ինդեքսը 2004թ. հունվար–հունիսի նկատմամբ (համադրելի գներով), % |
|---|---|---|---|
| հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում | 3263.3 | 3575.8 | 105.3 |
| քիմիական արդյունաբերություն | 7166.3 | 3295.7 | 100.0 |
| ռետինե և պլաստմասսայե արտա-դրատեսակների արտադրություն | 1541.3 | 1464.6 | 130.1 |
| այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 8899.1 | 8506.2 | 119.8 |
| մետաղագործական արդյունաբերություն | 62881.7 | 65683.5 | 145.2 |
| պատրաստի մետաղե արտադրատե-սակների արտադրություն | 2167.3 | 2179.7 | 110.4 |
| մեքենաների և սարքավորանքի արտադրություն | 2824.0 | 2816.6 | 109.1 |
| ոսկերչական արտադրատեսակների արտադրություն | 7487.0 | 7003.6 | 92.8 |
| գործունեության այլ տեսակներ | 5583.2 | 6139.1 | 82.8 |

**Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2005թ. հունվար-հունիսին**




[1] *Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*

## Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում




- Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում
- գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում
- ջրի հավաքում, մաքրում և բաշխում

## Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




**Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն**
1. հիդրոէլեկտրակայաններում
2. ջերմաէլեկտրակայաններում
3. ատոմային էլեկտրակայանում

Էլեկտրաէներգիայի հաղորդում և բաշխում էլեկտրացանցերի կողմից

### Հանքագործական արդյունաբերություն




### Մշակող արդյունաբերություն



2005թ. հունվար-հունիսին իրացվել է թողարկված արտադրանքի ծավալի 99.6%: Նշված ժամանակաշրջանում իրացված և թողարկված արտադրանքի ծավալների հարաբերակցությունն ըստ գործունեության հիմնական տեսակների, բնութագրվում է հետևյալով.

**Իրացված արտադրանքը թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ**



### Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ հանրապետության մարզերի, 2005թ. հունվար-հունիսին[1]

| | Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, *մլն. դրամ* | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, *մլն. դրամ* | 2005թ. արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2004թ.համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ *(համադրելի գներով), %* |
|---|---|---|---|
| **Ընդամենը ՀՀ** | **306720.4** | **305419.9** | **105.3** |
| *այդ թվում՝* | | | |
| ք. Երևան | 144052.5 | 143657.6 | 107.3 |
| Արագածոտն | 3675.7 | 3500.7 | 66.0 |
| Արարատ | 21744.3 | 25156.0 | 118.6 |
| Արմավիր | 14139.1 | 14203.3 | 110.4 |
| Գեղարքունիք | 6907.2 | 4419.3 | 104.6 |
| Լոռի | 17019.1 | 17232.2 | 111.0 |
| Կոտայք | 28447.6 | 27606.3 | 108.3 |
| Շիրակ | 6310.3 | 6280.2 | 93.2 |
| Սյունիք | 59799.8 | 58729.0 | 96.7 |
| Վայոց ձոր | 2529.3 | 2507.3 | 108.1 |
| Տավուշ | 2095.5 | 2128.0 | 104.4 |

2005թ. հունվար–հունիսին 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատ հանրապետության 8 մարզերի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրվել է արդյունաբերական արտադրության աճ, որը ներկայացվում է ստորև, ըստ մարզերի և արտադրությունների.

***-Երևան քաղաքում՝ 7.3***%, հիմնականում ի հաշիվ մետաղագործական արդյունաբերության (156.7%), ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների (132.1%), հագուստի (115.2%), պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (111.7%) և հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (106.2%),

***-Արարատի մարզում՝ 18.6***%, հիմնականում ի հաշիվ հանքագործական արդյունաբերության (2.2 անգամ), ծխախոտային արտադրատեսակների (2.1 անգամ), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (149.7%) և քիմիական արդյունաբերության (121.0%),

***-Լոռու մարզում՝ 11.0%,*** հիմնականում ի հաշիվ մետաղագործական արդյունաբերության (140.7%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (103.6%),

***-Արմավիրի մարզում՝ 10.4***%, հիմնականում ի հաշիվ հրատարակչական և տպագրական գործունեության (161.7%), պատրաստի մետաղե արտադրատեսակների (112.7%) և էլեկտրաէներգիայի արտադրության (108.7%),

-***Կոտայքի մարզում՝ 8.3***%, ի հաշիվ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (2.6 անգամ), մեքենաների և սարքավորանքի (187.9%), սննդամթերքի, ներառյալ խմիչքները (109.7%) և ադամանդների արտադրության (108.7%),

[1] *Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, մարզերով առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման,, մարզերով» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-203):*

***-Վայոց ձորի մարզում՝ 8.1***%, ի հաշիվ էլեկտրաէներգիայի (117.8%) ինչպես նաև սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (112.5%),

***-Գեղարքունիքի մարզում՝ 4.6***%, հիմնականում ի հաշիվ սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (113.0%),

-***Տավուշի մարզում՝ 4.4***%, հիմնականում ի հաշիվ թղթի, ստվարաթղթի և դրանից արտադրատեսակների արտադրության (121.7%):

Հարկ է նշել, որ հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 47.0% -ը բաժին է ընկել Երևան քաղաքի արդյունաբերական կազմակերպություններին:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն
ըստ հանրապետության մարզերի, 2005թ. հունվար-հունիսին



**Կազմակերպությունների արդյունաբերական արտադրանքի արտադրության և իրացման ծավալներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2005թ. հունվար-հունիսին**

| | Կազմակերպությունների քանակը | Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, մարդ | Թողարկված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն.դրամ[1] | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ[1] | 2005թ. արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (համադրելի գներով), % |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **2153** | **78501** | **268626.8** | **267326.3** | **105.8** |
| *այդ թվում`* | | | | | |
| մինչև 5 մարդ (գերփոքր)[2] | 907 | 2316 | 2592.0 | 2698.5 | 39.0 |
| 6 – 50 մարդ (փոքր)[2] | 966 | 15794 | 25477.6 | 24978.4 | 98.4 |
| 51 – 100 մարդ (միջին) [2] | 91 | 6661 | 9879.6 | 9686.8 | 75.8 |
| 101 և ավելի մարդ (խոշոր) [2] | 189 | 53730 | 230677.6 | 229962.6 | 110.7 |

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար, 42.1 և 44.9%: Հատկանշական է, որ վիճակագրական մոնիտորինգում 87% կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 10.4%-ը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր քանակում 8.8% կազմող խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի գրեթե 86%-ը:

2005թ. հունվար-հունիսին արտադրված (հաշվառվող) 115 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 50 -ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2004թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի` 62 -ից 23 -ի և սպառողական ապրանքների` 53 -ից 27 -ի գծով:

**Սպառողական ապրանքների արտադրության ծավալները[3]**

*(մլն. դրամ)*

| | Փաստացի թողարկումը հունվար-հունիսին | | Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % |
|---|---|---|---|
| | **2005** | **2004[4]** | |
| Սպառողական ապրանքներ, ընդամենը | 103353.2 | 107444.3 | 96.2 |
| *այդ թվում`* | | | |
| պարենային ապրանքներ | 61870.3 | 62549.0 | 98.9 |
| ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը) | 19072.0 | 19601.0 | 97.3 |
| ոչ պարենային ապրանքներ, ընդամենը | 22410.9 | 25294.3 | 88.6 |
| *այդ թվում`* | | | |
| թեթև արդյունաբերության[5] | 5016.1 | 7295.8 | 68.8 |
| մշակութակենցաղային և տնտեսական նշանակության | 17394.8 | 17998.5 | 96.6 |

*[1] Առանց ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների բազային ցուցանիշի) :*

*[2] Սույն բաշխվածությունը իրականացված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն, որի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր` 1210-205):*

*[3] Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*

*[4] 2004թ սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2005թ.գներով:*

*[5] Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*

*Սննդամթերք,ներառյալ խմիչքներ և ծխախոտ* արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները[1]

| | 2005 թ. հունվար-հունիս | 2004 թ. հունվար-հունիս | 2005թ. հունվար-հունիսը 2004 թ. հունվար-հունիսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Միս[2], տոննա | 18074 | 17596 | 102.7 |
| Մսամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա | 593.2 | 457.1 | 129.8 |
| Պանիր, տոննա | 6877.7◊ | 6906.6◊ | 99.6 |
| Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի)[2], տոննա | 184934 | 177472 | 104.2 |
| Պաղպաղակ, տոննա | 941.8 | 828.4 | 113.7 |
| Պահածո, տոննա | 1497.3 | 375.8 | 4 անգամ |
| Ալյուր, տոննա | 70281 | 70482 | 99.7 |
| Ձավարեղեն, տոննա | 541.0 | - | - |
| Հաց և հացամթերք, հազ. տոննա | 147.7 | 147.7 | 100.0 |
| Հրուշակեղեն, տոննա | 2123.1 | 2006.3 | 105.8 |
| Մակարոնեղեն, տոննա | 1357.2 | 1110.8 | 122.2 |
| Շաքարավազ, տոննա | 788.0 | - | - |
| Բուսական յուղ, տոննա | 101.9 | 266.2 | 38.3 |
| Օղի և օղու-լիկյորի արտադրանք , հազ. լիտր | 6077.8 | 4779.6 | 127.2 |
| Կոնյակ, հազ. լիտր | 3736.3 | 3602.6 | 103.7 |
| Գինի, հազ. լիտր | 982.8 | 1081.6 | 90.9 |
| Շամպայն գինի, հազ.լիտր | 124.5 | 137.3 | 90.7 |
| Գարեջուր, հազ. լիտր | 4524.7 | 3718.8 | 121.7 |
| Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր | 12467.3 | 14961.5 | 83.3 |
| Բնական հյութեր, հազ.լիտր | 2098.2 | 2155.2 | 97.4 |
| Հանքային ջրեր, հազ. լիտր | 10835.9 | 9193.9 | 117.9 |
| Աղ, տոննա | 15799.9 | 14261.7 | 110.8 |
| Սիգարետներ, մլն.հատ | 1351.6 | 1128.1 | 119.8 |
| Ֆերմենտացված ծխախոտ, տոննա | 357.6 | 484.4 | 73.8 |

*Մանածագործական և կարի* արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2005 թ. հունվար-հունիս | 2004 թ. հունվար-հունիս | 2005թ. հունվար-հունիսը 2004թ. հունվար-հունիսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Բամբակյա գործվածքներ, հազ. $մ^2$ | 86.3 | 84.2 | 102.5 |
| Գորգեր և գորգեղեն, $մ^2$ | 14136 | 14735 | 95.9 |
| Գուլպեղեն, հազ. զույգ | 177.0 | 151.5 | 116.8 |
| Տրիկոտաժեղեն, հազ. հատ | 1086.7 | 1042.5 | 104.2 |
| Կարի արտադրանք[3], մլն. դրամ | 3162.6 | 5200.7 | 60.8 |

2005թ. հունվար-հունիսին ***քիմիական*** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 33.7%-ով, քիմիկադեղագործական արտադրանքինը՝ 32.0%-ով, լվացող, մաքրող և օսլայող միջոցներինը՝ 20.3%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և լաքաներկանյութերի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 5.9 և 5.3%-ով:

[1] *Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):*

[2] *Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը): Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*

[3] *Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*

*Ոչ մետաղական հանքային* արտադրատեսակների արտադրությամբ և *հանքարդյունահանմամբ* զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2005 թ. հունվար-հունիս | 2004 թ. հունվար-հունիս | 2005թ. հունվար-հունիսը 2004թ. հունվար-հունիսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ$^3$ | 11871 | 12037 | 98.6 |
| Ապրանքային բետոն, մ$^3$ | 25536 | 23912 | 106.8 |
| Երեսպատման սալեր բնական քարից, մ$^2$ | 71052 | 66938 | 106.1 |
| Ոչ հանքային շինանյութեր, մ$^3$ | 164980 | 175300 | 94.1 |
| Կիր, տոննա | 4582 | 1729 | 2.7 անգամ |
| Ցեմենտ, հազ. տոննա | 255.1 | 177.3 | 143.9 |
| Գաջ, տոննա | 17930 | 21368 | 83.9 |
| Ուղիղ կտրվածքի տուֆ, մ$^3$ | 21312 | 25365 | 84.0 |
| Ծակոտկեն լցանյութեր, մ$^3$ | 52317 | 53546 | 97.7 |
| Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ$^2$ | 17069 | 24097 | 70.8 |

*Մետաղագործական* արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ցինկի խտանյութի արտադրությունն ավելացել է 86.6%-ով, կոնվերտորային (սև) պղնձինը՝ 41.2%-ով, իսկ պղնձի խտանյութում պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 6.1 և 9.6%-ով:

*Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի* արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2005 թ. հունվար-հունիս | 2004 թ. հունվար-հունիս | 2005թ. հունվար-հունիսը 2004թ. հունվար-հունիսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Մետաղահատ հաստոցներ, հատ | 8 | 147 | 5.4 |
| Ռելեներ, հատ | 142489 | 175806 | 81.0 |
| Ուժային ճկուն կաբելներ, կմ | 2.3 | 3.7 | 62.2 |
| Տեղակայման հաղորդալարեր, կմ | 53.3 | 71.6 | 74.4 |
| Էմալապատ լարեր և փաթույթալարեր, տոննա | 40.8 | 11.9 | 3.4 անգամ |
| Էլեկտրաեռակցման սարքավորումներ, հատ | 4360 | 5400 | 80.7 |
| Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ | 923.2 | 976.0 | 94.6 |
| Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ | 742 | 3226 | 23.0 |
| Ուժային տրանսֆորմատորներ, հատ | 3 | 125 | 2.4 |
| 63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ | 38 | 196 | 19.4 |
| 0.5-100 կՎտ հզորության փոփոխական հոսանքի գեներատորներ, հատ | 1 | 25 | 4.0 |
| Համակարգիչներ, հատ | 1090 | 1110 | 98.2 |
| Ջրային հաշվիչներ, հատ | 86 | 355 | 24.2 |
| Էլեկտրական հաշվիչներ, հատ | 1447 | 3250 | 44.5 |
| Սառնարանային ցուցափեղկեր, հատ | 174 | 108 | 161.1 |
| Պոմպեր, հատ | 173 | 276 | 62.7 |

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվար-հունիսին հանրապետությունում թողարկվել է 3345.8 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 104.1%-ը: Ընդ որում, ՀԱԷԿ-ում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 7.0% -ով, ՋԷԿ-երում՝ 31.8% -ով, իսկ ՀԷԿ-երում՝ նվազել է 18.3% -ով:

2005թ. հունվար-հունիսին ՀԱԷԿ-ը թողարկել է 1521.6 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 45.5% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 944.7 մլն. կՎտ ժամ և 28.2%-ը, ՀԷԿ-երը՝ 879.5 մլն. կՎտ ժամ և 26.3%-ը:

2005թ. հունվար-հունիսին հանրապետությունում թողարկվել է 205.4 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 70.9%: